

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ «ՔՆՆԻԿՈՆԸ»

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Անանիա Շիրակացու ժառանգության ուսումնասիրությունը և հրատարակումը սկսվել է դեռևս XVIII դարից: XIX դարի վերջից և XX դարի սկզբներից նրա աշխատությունները սկսում են թարգմանել և հրատարակել ռուսերեն և այլ լեզուներով:

Անանիա Շիրակացու ժառանգության ուսումնասիրման գործում վճռա-
կան քայլ կատարեց պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը: Լինելով գիտակ մասնագետ Մատենադարանի ձեռագիր ֆոնդերի, նա 1930—1940-ական թթ. ի հայտ բերեց ու հրապարակեց նոր գործեր: Գիտական կարևոր նշանակություն ունեցավ նրա «Շիրակացու մատենագրությունը» դոկտորական դիսերտացիան, որը խթանեց Անանիա Շիրակացու ստեղծագործությունների ուսումնասիրությունը ֆիզիկա-մաթեմատիկական և այլ գիտությունների պատմության տեսանկյունից: Վերջին տասնամյակներում լույս տեսան մի շարք մենագրություններ ու հոդվածներ, որոնց մեջ պատշաճ տեղ է հատկացվում Շիրակացու աշխատություններին: Ներկայումս շարունակվում են որոնումները նրա գրվածքների հայտնաբերման և արժեքավորման ուղղությամբ:

Շիրակացու հայտնի աշխատություններից է «Քննիկոնը», որը ժամանակին ուսումնասիրվել է մասնագետների կողմից: Չնայած առկա ուսումնասիրություններին, մեացել են սկզբնաղբյուրների հետ կապված որոշ կնճռոտ հարցեր, որոնք տեղիք են տալիս թյուրմեբոլումների, ուստի անհրաժեշտ է վերստին անդրադառնալ այդ խնդրին¹:

«Քննիկոնի» մասին առաջին վկայությունը տալիս է Հովհաննես Դրասխանակերտցին: Նա գրում է. «Իսկ Անաստասայ հայրապետին հոգացեալ վասն Հայկական տօմարի, զի թերևս անշարժ զնա ըստ այլոց ազգաց մարթասցէ յօրինել. զի միշտ անշարժք լինիցին տօնք տարեկանաց կամ յեղափոխ եղանակք ժամանակաց: Վասն որոյ և առ ինքն զԱնանիայ Անեցի կոչեալ, որ բանիբուն այնմ արուեստի էր հմուտ, հրամայէ նմա ստեղծագործել զխնդրելին իւր: Իսկ նորա ջան ի վերայ եղեալ և ըստ բոլոր ազգաց պայմանի՝ անշուշտ յօրինեալ զկարգ Հայկականրս տօմարի. զի բարեձևադունեց ոմանց և զմերս կշռադատեալ՝ մի՛ կարոտասցուք գալ ի զուգաւորութիւն Հռովմայացոց: Եւ մինչդեռ խորհէր մեծն Անաստաս ժողովօք եպիսկոպոսաց զեղեալսն հաստատել՝ վախճան կենաց նմա ժամանէր, կացեալ յաթոռ հայ-

¹ Մեր «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» (Երևան, 1959) մենագրության մեջ առանձին գլուխ է հատկացված Անանիա Շիրակացուն, հատկապես նրա թվաբանության դասադրքին: Մեկ գլուխ էլ նվիրված է Նվկիդեսի երկրաչափության հայերեն հնագույն թարգմանությանը: Քանի որ աշխատության մեջ տոմարական հարցերը քննության չեն ենթարկվել, որոշ հարցեր՝ կապված Դրիդոր Մադիստրոսի նամակի հետ, իրենց լուսարանությունը չեն ստացել:

րապետութեան ամս վեց: Անփոյթ զկնի եկելոցն այսմիկ արարեալ՝ և զառա-
ջին մշտախաղաց շրջագայեալ կարգն կալեալ»²:

Երկրորդ պատմիչը Ստեփանոս Տարոնեցի Ասողիկն է, որը գրում է. «Իսկ
Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ ըստ այլոց
ազգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացոյ կարգել ղբրօնիկոնն հրաշազան,
յորում զտոմարս մեք կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով
և եպիսկոպոսօք հաստատել ղբրօնիկոնն՝ և վախճանի՝ կացեալ յաթոոն
ամս 2 (6)»³:

Այս պատմիչները շատ որոշակի տեղեկութիւն են հաղորդում Շիրա-
կացու «Քրոնիկոնի» մասին: Այժմ տեսնենք պատմական աղբյուրներում
նշված վկայութիւնները հայկական անշարժ տոմար կազմելու մասին ինչ-
պե՞ս են լուսաբանում մասնագետները: Պրոֆ. Բ. Թումանյանը իր «Հայ
աստղագիտութեան պատմութիւն» մենագրութեան մեջ գրում է. «Միջնա-
դարյան մի շարք մասնագետներ (այդ թվում Հովհաննէս Իմաստասերը,
Ասողիկը, Անեցին) նշում են այն մասին, որ Անաստաս կաթողիկոսը պատ-
վիրել է Շիրակացուն, որպէս տոմարական հաշվումների լավագույն գիտա-
կի, կազմելու հայկական անշարժ տոմար և ներկայացնել հաստատման: Այն
կազմվում է, սակայն Անաստաս կաթողիկոսը շուտով մահանում է, իսկ
նրա հաջորդները այդ հարցի վրա ուշադրութիւն չեն դարձնում»⁴:

Պրոֆ. Ա. Աբրահամյանը «Շիրակացու մատենագրութիւնը» մենա-
գրութեան մեջ մեկ ամբողջ գլուխ է հատկացրել Շիրակացու տոմարական
աշխատութիւններին: Համապատասխան վկայակոչումներ անելով Դրաս-
խանակերտցոյց, Ասողիկից և ուրիշներից, նա նշում է. «Մեր կարծիքով,
նախ ճիշտ չէ այն բանասերների կարծիքը, որոնք խոսելով Ասողիկի և Շի-
րակացու այս տեղեկութիւնների մասին, «Քրոնիկոն» բառը հասկանում են
միայն ժամանակագրութիւն, հունական *χρονολόγιον*, մոռանալով, որ հնում
«Քրոնիկոն» են կոչվել նաև ժամանակագրութիւնների և տոմարային աշ-
խատութիւնների տեքստերի մեջ հաճախ հանդիպող աղյուսակները: Ավելի
քան անհամոզեցուցիչ է Շիրակացու Զատկի ճառի վերջում բերված տեղեկու-
թեան հիման վրա «Քրոնիկոն»-ը ժամանակագրութիւն ենթադրելը: Շիրա-
կացու խոսքը, մեր կարծիքով, պարզապէս իր կազմած ՇԼԲ աղյուսակին է
վերաբերում: Նա կազմած է եղել 532-ամյա շրջանի համար աղյուսակ՝ 532
առանձին տարիների համար: Շիրակացու խոսքը «Դրոշմեցի առանձին
զբնաւ մի մի ամ» մեր կարծիքով հենց դրան է վերաբերում:

Շիրակացու ՇԼԲ աղյուսակ կազմելու փաստը միանգամայն տրամաբա-
նական է. եթե ի նկատի ունենանք, որ Շիրակացին պատվեր է ստացել
Անաստաս կաթողիկոսից կազմելու տոմար և այդ տոմարը պիտի հասկա-
նալի լինէր բոլորին. նա ուղեցուց պիտի հանդիսանար՝ գտնելու տվյալ
տարվա զատիկը, բարեկենդանն և տոմարական կարևոր հաշիվները, իսկ
այդ հնարավոր էր միայն նման աղյուսակով»⁵: Այս հարցին ծառայելու

2 «Յովհաննէս. կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս. 1912, էջ 92—93:

3 «Ստեփանոսի Տարոնեցոյ Ասողական Պատմութիւն տիեզերական», ՍՊԲ, 1885, էջ 99:

4 Բ. Թ. Թումանյան, Հայ աստղագիտութեան պատմութիւն, Երևան, 1964, էջ 53—54:

5 Ա. Գ. Աբրահամյան, Շիրակացու մատենագրութիւնը, Երևան, 1944, էջ 106:

կերպով անդրադառնում է ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հ. Ս. Բադալյանը իր «Օրացույցի պատմության» մեջ:

Հ. Բադալյանը մեջբերումներ է կատարում Ստեփանոս Տարոնեցուց (Ասողիկ), Հովհաննես Դրասխանակերտցուց և Կիրակոս Գառնակեցուց, նշելով. «Մեզ հասած վերոհիշյալ փայլուն վկայությունները միասնաբար հաստատում են այն հանգամանքը, որ Անաստասի կաթողիկոսության վերջին տարիներին Անանիա Շիրակացին եղել է հայտնի ու ճանաչված գիտնական, գիտուն տոմարագետ, այլապես Անաստաս կաթողիկոսը նրան չէր հանձնարարի անշարժ տոմար կազմելու կամ ընդհանրապես տոմարական հաշվումները կարգավորելու ու դյուրին դարձնելու պատասխանատու աշխատանքները:

Մատենագրական տվյալների համաձայն կարծվում է, որ Անաստասը հայոց տոմարը կարգավորելու գործը հանձնարարել է Անանիա Շիրակացուն հավանաբար 668 թվականին, իսկ Անաստասը մահացել է 671 թվականին⁶: Մեզ հասած փաստական տվյալները վկայում են այն մասին, որ Շիրակացին բացի անշարժ տոմարի նախագիծ մշակելուց, ղեկավարել է հայոց շարժական տոմարը հռոմեական անշարժ տոմարի, ինչպես և այլ աղբերի տոմարների հետ համապատասխանեցնելու հարցով: Այդ նպատակով Շիրակացին կազմել է էասյան 532-ամյա պարբերաշրջանի յուրաքանչյուր տարվա համար առանձին-առանձին օրացույց, ըստ հռոմեական ամիսների և դրանց ղուգահեռականը, ըստ հայոց ամիսների, որտեղ բացի նշանավոր տոներին, տրված են եղել զարնանամուտը, ղատկյան լիալուսնի ժամանակը, տարվա վերադիրը, յոթներեակը, հնգեակը, ղատիկը և այլ շարժական տոներ»⁷:

Այսպիսով, պատմական աղբյուրների հետազոտությունը ցույց է տալիս, որ Անաստաս կաթողիկոսը Անանիա Շիրակացուն հանձնարարել է կազմել հայկական անշարժ տոմար. Շիրակացին կազմում է հայկական անշարժ տոմար, ինչպես նաև այդ տոմարը հունական և այլ աղբերի տոմարներին ղուգադրելու համապատասխան աղյուսակ ՇԼԲ, որը հասել է մեզ: Շիրակացու այս տոմարական աշխատությունը հայ մատենագրության մեջ հայտնի է «Քննիկոն» կամ «Քրոնիկոն» անվան տակ: Այդ աշխատությունը Անաստաս կաթողիկոսի մահվան պատճառով եպիսկոպոսների ժողովում չի քննվում ու չի հաստատվում: Անաստաս կաթողիկոսի հաջորդները հետագայում այդ հարցի վրա ուշադրություն չեն դարձնում:

Այժմ դիմենք Գրիգոր Մադիսարոսի նամակին՝ ուղղված Պետրոս կաթողիկոսին, որովհետև այդ նամակի վերնագրում տեղ է զտել «Մեծ քննիկոն» անվանումը: Այնտեղ ասված է. «Առ տէր Պետրոս ի ժամանակի խուժան յառնելոյ ի քաղաքին ի վերայ նորա. բան մխիթարական և հարցումն Անանիայի գրոց Շիրակայնոյն, զոր մեծ Քննիկոնն անուանեն»: Նա միաժամանակ նշում է. «Իսկ դու ո՞վ վսեմական և սրբադանութեանցն նախապետական, ղարիական սերտութեան ղմտաւ ածցես և ղարդարութեանն ողջախոհութիւն, բանդի այսու ղքեղ մշտափայլ տեսանեմք, և մի՞ ինչ ի քում մակաւասար մակամտածութիւնս թեակոխեսցիս, խոկալով տրտմական կամ եթէ տխրութեան ինչ ի քեղ կրել ախտս. քանզի յորժամ տկարանամք, յայն-

⁶ Անաստաս կաթողիկոսը մահացել է 666/667 թ.:

⁷ Հ. Ս. Բադալյան, Օրացույցի պատմություն, Երևան, 1976, էջ 66—67:

ժամ դորանամք, և հոգին ի թիկունս հասանէ տկարութեան մերում... միայն այարտ է աւագ աշօք շուրջ հայել և ժամանակի ծառայել, որպէս ումեմն իմաստնոյ քան զայսոսիկ թուեցաւ...

Փոխան Յիսուսի, համարձակիմք, միշտ սովորեալ յառատաձիր պարգևս, զկարևորսն և զպիտանացունս յարատեական բաշխելով քեզ, որ ոչդ երբէք դանդաղիս զգիրս Անանիայի Շիրակայնոյ, որ բազում աշխատութեամբ և յածաւու խոնջմամբ հաւաքեալ ի բազմազսն և յոքնաբեղուն մատենից յորում և ենթակայացեալ են ոչ միայն քսութիցն արհեստք, այլ բոլոր էակացն խոկմունս, որ են այժմ ի տան տէրունեան, զոր նախ քան զքեզ խրթնացեալ և թագնի ընդ գրուանաւ ծածկէին, զոր և ինքն իսկ, որ մատենագրեաց զայսոսիկ յառաջնում իւրոյ տրամաբանութեան բազում տարակուսանս և կեղերգականս սակս մերոյ ազգային անփոյթ առնելոյ զայդպիսի գործառնութիւնս, յորում մթերեալ են տոգորք աստուածային և ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեանն, որք են ի տարրորոշ քանակէ տարակացեալք իսկ երկրաշափութեանն և աստեղաբաշխութեանն, որք են ի շարունակ քանակէ, և զկսի այսոցիկ յարամանեալք արհեստք և մակածութիւնք մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հռետորական, թէպէտ և մասնաւոր զփոշէտեսական՝ զօրէն գործասէր մեղուի ամբարեաց ի մեղունոցի այդր ի բազմավէտ մատենագրից Քաղղէացոց և Յունաց և ամենայն ազգաց առ ի ծանօթ լինելոյ, որք նախ քան զայսոսիկ հաւաքեալն մատեանս մակացու եղեալ իմաստասիրութեան, քանզի որք ոչ նախուստ կրթեալք են, բոլորովին ոչ գոյ հնար թեակոխել զայնպիսի աստուածաբանութիւնս, քանզի պարտ է նախ ի բնաբանականէն յուսումնականն ամբառնալ և անդուստ աստուածաբանականն»⁸,

Գրիգոր Մագիստրոսի նամակի վերնագրում նշված է «Մեծ Քննիկոն»։ Բնագրում «քննիկոն» բառը չի գործածվում։ Ավելին. նամակում բերված պիտությունների շարքում «Քննիկոնի» մասին ոչ մի հիշատակություն չկա։ Ամբողջ նամակում ոչ մի խոսք չկա Անանիա Շիրակացուն Անաստաս կաթողիկոսի կողմից արված հանձնարարության մասին։ Այս ամենը ցույց է տալիս, որ վերնագիրը հետո է դրված և նրա մեջ նշված «Մեծ Քննիկոնը» ոչ մի առնչություն չունի նամակի հետ. դա հետագայում կատարված հավելում է։ Մագիստրոսն իր նամակին այդպիսի վերնագիր դնել չէր կարող։

Հայ մտավորականների շրջանում սերնդից սերունդ հաղորդվել է, որ Շիրակացին մշակել է անշարժ տոմար, բայց կաթողիկոսի մահվան պատճառով չի հաստատվել։ Անշարժ տոմարի հարցը օրակարգից չհանվեց այնքան ժամանակ, մինչև որ Հովհաննես Իմաստասերը, արդեն Գրիգոր Մագիստրոսի մահվանից հետո, 1084 թ. կազմեց այն։

Որովհետև Գրիգոր Մագիստրոսի նամակում խոսվում է Անանիայի Շիրակացու մասին, բնութագրվում է նրա բեղմնավոր գործունեությունը, գրչագիրները, չխորանալով հարցի էության մեջ, ըստ իրենց նախասիրության վերնագիր են դրել և այնտեղ էլ գործ ածել «քննիկոն» բառը։

Վերջին տարիներին Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատակից Ա. Ս. Մաթևոսյանը հանգես եկավ Անանիա Շիրակացու «Քննիկոնի»

⁸ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», հրատ. Կ. Կոստանյանի. Ալեքսանդրապոլ. 1910, էջ 7—8.

մասին մի հոգվածաշարով⁹։ Այդ հոգվածներում Ա. Մաթևոսյանը փորձում է ապացուցել, որ մինչև այժմ Անանիա Շիրակացու ժառանգությունը ուսումնասիրողների ուշադրությունից վրիպել է Շիրակացու հիմնական աշխատությունը՝ «Քննիկոնը»։ Այս առթիվ նա գրում է. «Չնայած Շիրակացու մասին հղած պատկանելի գրականության առկայությանը, այդուհանդերձ, նրա ամենակարևոր գործի՝ «Քննիկոնի» մասին տակավին ոչ մի խոսք չկա»¹⁰։ Ա. Մաթևոսյանը ելակետ է ունեցել մի կողմից՝ Գրիգոր Մագիստրոսի նամակի վերնագրում «Քննիկոն» բառը, մյուս կողմից՝ նամակում շարադրված գիտությունների ցանկը ու եկել այն եզրակացության, որ «Քննիկոնը» մի դասագիրք է, որտեղ մթերված են VII դարում գոյություն ունեցող բոլոր գիտությունները։ Այստեղից ելնելով նա¹¹ փորձել է իր եզրակացությունը համապատասխանեցնել Դրասխանակերտցու և Ասողիկի վկայություններին։ Ա. Մաթևոսյանը գրում է. «Ասողիկը բավականին ընդարձակում է մեր գիտելիքները Շիրակացու և Անաստաս կաթողիկոսի ձեռնարկի մասին։ Շիրակացին պետք է կարգեր «գեղեցիկ ճշգրտության» յոթում զտոմարս մեք կարգեաց անշարժ», իսկ կաթողիկոսը պետք է «ժողովով և եպիսկոպոսք» հաստատեր «Քննիկոնը» ամբողջությամբ և ոչ միայն անշարժ տոմարը։ Դրասխանակերտցին ևս գրում է, թե եպիսկոպոսական ժողովով պետք է հաստատեն «գեղեցիկ»։ Նա թերևս նկատի ունի ոչ միայն տոմարը, այլև «Քննիկոնը» ամբողջությամբ, այսինքն՝ այն, ինչ գրել և ներկայացրել էր Շիրակացին»¹²։

Ասողիկի մոտ ոչ մի ձեռնարկի մասին խոսք չկա. «Քննիկոնը» տոմարական աշխատություն է և ուրիշ ոչինչ։ Տոմարը անջատել «Քննիկոնից»՝ սխալ է։

Դրասխանակերտցու «գեղեցիկ» կամայական կերպով մեկնաբանելը նույնպես սխալ է։ Մի այլ կապակցությամբ նշվում է, որ «Շիրակացին «Քննիկոնը» գրել է Անաստաս կաթողիկոսի (661—667) հրամանով, բայց իր ծրագրով։ Կաթողիկոսի խնդրած հայոց անշարժ տոմարի հետ ներկայացված «քառյակ արվեստները» և բոլոր էականների մասին գիտությունները թույլ են տալիս համոզվելու, որ Շիրակացուն հաջողվել է իր կրթական ծրագիրը անցկացնել «Քննիկոն» (տոմար) անվան տակ։ Սա նշանակում է նաև, որ Անաստաս կաթողիկոսը համախոհ է եղել Շիրակացու ծրագրին, ունկնդրել և հովանավորել է նրան»¹²։ Այստեղ աղավաղվում են պատմիչների վկայությունները, ուր ականարկ անգամ չկա, թե Շիրակացին տոմարի հետ միասին ներկայացրել է «քառյակ արվեստները» և այլ գիտություններ։ Այդպիսի վկայություն չկա և չի կարող լինել։ Լսված չէ, որ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղագիտությունը ներկայացվեն եպիսկոպոսների ժողովին հաստատման։ Գիտության պատմությանը նման փաստ հայտնի չէ։

Տեսնենք, թե Մաթևոսյանը ինչպես է որոշում իր կողմից հորինված դասագրքի բովանդակությունը։ Նա վերցնում է Գրիգոր Մագիստրոսի նամակի այն մասը, որտեղ բնութագրվում են Շիրակացու աշխատությունները։

⁹ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 66—76, № 8, էջ 71—81, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 163—178։

¹⁰ Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 7, էջ 66—67։

¹¹ Նույն տեղում, էջ 70։

¹² Նույն տեղում, էջ 68։

և թվարկվում են այն գիտությունները, որոնց ուղղությամբ նա աշխատել է։ Մաթեմատիկայի գրում է. 1. «Տոգորֆ աստվածային, այսինքն աստվածային ուսումն կամ գիտություններ։ 2. Ամենայն արհեստի մակացություն, այսինքն՝ յոթ ազատ արվեստները հետևյալ դասավորությամբ. ա. քուականությունը. բ. երաժշտականությունը. գ. երկրաչափությունը. դ. աստեղարաչափությունը։ Սրանից հետո շարադրված են՝ 3. արհեստ, այսինքն՝ տոմար-տոմարագիտություն, 4. մակացություն, այսինքն՝ իմաստասիրություն, 5. մատենագրություն, 6. հոեոորական վարժում, 7. Քաղվածքներ Քաղցեացուց, Յունաց և ամենայն ազգաց բազմավէպ մատենագրից»¹³։ Ստորև ղետեղում ենք նամակի այդ նույն հատվածի գրաբար տեքստը և թարգմանությունը.

«Մթերել են տոգորք ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան և նախադասեալ է թուականութեանն և երաժշտականութեան և երկրաչափութեան աստեղաբաշխութեանն... և զկնի այսորիկ յարամանեալք արհեստք և մակածութիւնք, մատենագրութիւնք և գրէ եթէ ամենայն բոլոր վարժումն հոեոորական»։

«Մթերված են աստվածային հմտություններ և արտահայտված ու տեղափոխված են ամեն մի արհեստի տեղեկություններ և նախապատվություն է տրված թվաբանությանը և երաժշտությանը, երկրաչափությանը և աստղաբաշխությանը... և սրանից հետո հարմարված արհեստներն ու գիտությունները, մատենագրությունը, և գրեթե ճարտասանական ամբողջ վարժությունը»։

Համեմատությունը ցույց է տալիս, որ նշված գիտությունները խմբավորելու գեպըում ստացվում է շորս, այլ ոչ թե վեց։ Նախապատվություն է տրվում շորս արվեստների, այլ ոչ թե յոթ։ «Արհեստք» թարգմանված է տոմար, տոմարագիտություն, որը սխալ է։ Այս բոլորի հետևանքով «Քննիկոնի» բովանդակությունը ներկայացվում է հետևյալ կերպ. «Առաջին մասը կազմված է՝ ներածությունից (որը էակաների մասին գիտություն է) և ա. «Թվաբանութիւն», բ. «Երաժշտութիւն», գ. «Երկրաչափութիւն», դ. «Աստեղաբաշխութիւն» բաժիններից։

Երկրորդ մասը նույնպես կազմված է՝ ներածությունից (որը տոմարագիտություն է) և ա. «Տոմար», բ. «Տիեզերագիտութիւն» և «Մակածութիւնք», գ. «Մատենագրութիւն», դ. «Հոեոորական ուսումն» (մասնակի) բաժիններից»¹⁴։

Եթե առաջին մասում թվարկված արվեստները բխում են նամակից, ապա երկրորդ մասի ա և բ կետերում նշված առարկաների մասին Մագիստրոսի նամակում ոչինչ չի ասվում։ Կարելի էր սրանով վերջացնել, սակայն Ա. Մաթեմատիկանը չի բավականացել մեկ հոդվածով, այլ հանդես է եկել ևս երկու ուրիշներով, նույնպես նվիրված «Քննիկոնին»։ Երկրորդ հոդվածում քննարկվում են Շիրակացու ինքնակենսագրությունը և թվաբանական շորս չորսոգությունը, փորձ է արվում ապացուցելու, որ դրանք հանդիսանում են «Քննիկոն» աշխատության ներածությունը։

¹³ Նույն տեղում, էջ 71։

¹⁴ «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 164։

«Քննիկներ» տոմարական աշխատություն է, ինքնակենսագրությունը չի կարող հանդիսանալ դրա կամ որևիցե աշխատության առաջաբան: Իվելի մոտիկից ծանոթանալու համար թվաբանական գործողություններին՝ ներքև-վում զետեղում ենք գումարման և բազմապատկման աղյուսակների ներածությունները:

Դումարում

«Անանիա Շիրակացու խոստումն աշակերտացն և առաջին զլուխ:

Պատճառ վարկանիմ, ով սիրողը իմաստութեան և որք իմոյս էք ցանկացեալք գիտութեան՝ արձանացուցանել ձեզ զչանս նախնեաց զարուեստրս համարողութեան՝ որ իբրև ի կենդանի ձայն է ի բարի ուսուցչէ: Ուսուցանիչիք իմոցս զծագրեացս թէպէտ և կարճառօտ կարգեցի զսակաւս ի բազմաց, զի մի ձանձրոյթ զեծ յաճախելն առնիցիմ. սուղ և հեշտարիներցի զնախնեաց պիւս, որպէսզի կարող լինիչիք յայսցանէ և զյոգունս իմանալ և զբովանդակն: Եւ արդ սկսանիմ ի կրտսերագունէս ասել ըզպրակս մանկանցն և զանհրմտագունից: Նախավարժումն զլուխ առաջին համարողութեան որ կոչի ընդունելութիւն»¹⁵:

Բազմապատկում

«Անանիայի Շիրականու իրաման աշակերտացն և երրորդ զլուխ:

Ճանապարհորդեալք ընդ թիւսդ ընթացարուք համարձակ ընդ որ ես ձեզ տաքածանեմ իբրև զալիս լուրթս և ցածունս առաջի դրոմոն նավուց, որք ի զիջլոյն են անհոգացեալք, զի անդադար աշխատութեամբ զիրմբոնելի լինիցի շահն: Եռավարժումն: Գլուխ երրորդ համարողութեան, որ կոչի բազմապատկել»¹⁶: Բազմապատկման աղյուսակները բաղկացած են 36 խմբից, յուրաքանչյուր խմբում չորս աղյուսակ, որոնք պարունակում են 37 արտադրյալ, իսկ ընդամենը՝ 1332 արտադրյալ:

Շիրակացու դասագրքից կատարված մեջբերումները բացահայտ կերպով ցույց են տալիս, որ մենք գործ ունենք զպրոցի ցածր դասարանների համար նախատեսված թվաբանության դասագրքի հետ: Այս աղյուսակները հանդիսանում են թվաբանության դասագրքի անբաժանելի մասերը և չեն կարող լինել տոմարական աշխատության ներածություն: Չնայած հոգվածում խոսվում է թվաբանության պատմության, տեսական և գործնական թվաբանության մասին, սակայն ճիշտ չի հասկացվում այդ բաժանման իմաստը, որի հետևանքով թվաբանական գործողությունները (գումարում, հանում, բազմապատկում, բաժանում) մտցվում են տեսական թվաբանության մեջ:

Այժմ համառոտակի անդրադառնանք իրրորդ հոգվածին. այդտեղ հեղինակը նպատակ է դրել որոշելու «Քննիկներ» երկրաչափության բաժնի բովանդակությունը: Այդ մասին կարելի էր չխոսել, որովհետև «Քննիկներ» իմաստը պարզաբանելուց հետո այդ հոգվածը միանգամայն արժեքազրկվում է: Սակայն մենք ուզում ենք կանգ առնել հոգվածում շոշափվող որոշ արցների վրա, նպատակ ունենալով ցույց տալ այդ աշխատանքը շարադրելու համար ընտրված աբաղադրի մեթոդը: Ինչպես վերևում ցույց տրվեց,

¹⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 1770, էջ 385:

¹⁶ Նույն տեղում, էջ 388:

«Քննիկոնի» բովանդակությունը Ա. Մաթևոսյանը բխեցնում է Գրիգոր Մագիստրոսի նամակից. Եվկլիդեսի երկրաչափության հայերեն թարգմանության պատառիկների մասին աղբյուրագիտական նկարագրություն անելուց հետո այս մտցնում է երկրաչափության բաժնի մեջ, իսկ երկրաչափության լրավելը՝ «Քննիկոնի» մեջ: Դա նշանակում է, որ Եվկլիդեսի երկրաչափության թարգմանիչը Անանիա Շիրակացին է: Մագիստրոսին լավ ծանոթ էր Շիրակացու երկրաչափության բաժնի բովանդակությունը, հետևաբար նա գիտեր, որ Շիրակացին թարգմանել է Եվկլիդեսի երկրաչափությունը և ինքը չէր ձեռնարկի նույն աշխատության թարգմանությունը: Այդ հայտնի է մեզ Մագիստրոսի՝ Սարգիս վարդապետին ուղարկած նամակից, ուր նա գրում է. «Ոչ եմք երբէք դադարեալ ի թարգմանութենէ ևս. բաղում մատեանս, գորս ոչ եմք գտեալ ի մեր լեզուս՝ զերկուս մատեանս Պղատոնի՝ զՏիմէոսի տրամաբանութեանն և զՓեդովնի, յորս բոլոր ճառսն նախագիտականին այն պարփակեալ կայ, և զայլս բազումս յիմաստասիրացն. իւրաքանչիւր մատեանքս այս մեծագոյն է քան զտարևոր տօնականս, բայց և գտեալ մեր իսկ հայ լեզու գրեալ թարգմանչացն՝ զգիրս Ողոմպիոդոսի, զոր Դավիթ յիշատակէ, կարի յոյժ սքանչելի և հրաշալի բանաստեղծութիւնս մակաւասար բոլոր իմաստասիրական բանից. գտեալ եմ և զԿալիմաքոսի և զԱնդրոնիկեայն ի հայ լեզու. բայց և զերկրաչափականն զԵվկլիդոսին սկսայ թարգմանել. և լթէ տակաւին կամեսցի Տէր երկարանալ մեզ ի կենցաղումս, բաղում հոգս յանձին կալեալ զմնացեալսն բոլոր Յունաց և Ասորւոց թարգմանել ոչ դանդաղեցայց»¹⁷:

Արդյոք հոգվածագրին ծանոթ է այս:

Այժմ անդրադառնանք մի այլ հարցի:

Ինչպես հայտնի է, VII դարի հայկական աշխարհագրությունը կամ, ինչպես անվանում են, հայկական «Աշխարհացոյց»-ը բավական հանգամանորեն ուսումնասիրված պատմական հուշարձան է: Այդ հարցով զբաղվել են անվանի գիտնականներ Ք. Պատմյանը, Ա. Սուբրյանը, ակադեմիկոս Հ. Մանանդյանը, Հայկ. ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանը, պրոֆ. Աբրահամյանը և շատ ուրիշներ: Քննության ժամանակ դրսևորվել են տարբեր տեսակետներ: Գիտական հասարակայնության կողմից արդեն հաստատված պիտի համարել, որ այդ աշխատությունը գրվել է VII դարում, նրա հեղինակը հանդիսանում է Անանիա Շիրակացին: Այս բոլորը հոգվածագրին չի բավարարում: Նա ցանկանում է այդ ևս ապացուցել «Քննիկոնով»:

«Հայ մատենագրության մեջ պահպանվել է աշխարհագրական մի հուշակապ հուշարձան, որը մի քանի հարյուրամյակ է արդեն տեղափոխվում է դարից դար, հեղինակից հեղինակ, վերնագրից վերնագիր. մերթ դառնում է Լրկրնների նկարագրություն, մերթ քարտեզների բացատրություն, տիեզերագիտության և աշխարհագրության դասագիրք և այլն: Հիմնական պատճառը «Քննիկոնի» անհայտ կամ մասնատված լինելն էր, որից հետո «անտերացած» երկի ճակատագիրը սովորական է. կամ վերագրվում է որևէ մեկին, ում հարմար է նկատվում, կամ մնում է անհեղինակ և տարուբերվում ենթադրությունների խարխուլ նավակի վրա»¹⁸:

¹⁷ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», էջ 66:

¹⁸ Ա. Ս. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնի» երկրաչափության բաժնի, «Պատմա-բանասիրական հանդես», 1979, № 2, էջ 169:

Ինչպես տեսնում ենք, հողվածագիրը իր կողմից նկարագրված իրավիճակը դարձյալ կապում է, ինչպես միշտ, «Քննիկոնի» հետ։ Նա ամենահնագույն գիտություններից մեկը՝ աշխարհագրությունը, Շիրակացու ալլ հայանի աշխատությունների հետ խմբավորելով՝ մտցնում է մաթեմատիկական գիտության երկրաչափության բաժնի մեջ։ Իսկ երկրաչափությունը՝ «Քննիկոնի» մեջ։ Եթե հողվածագրին հարց տրվի, թե բացի «Քննիկոնից» Շիրակացին ինչ աշխատություն ունի, պատասխանը կլինի բացասական, որովհետև բոլոր գիտությունները, ըստ հողվածագրի, մտնում են «Քննիկոնի» մեջ։ «Քննիկոն» Շիրակացու տոմարական աշխատության վերնագիրն է։ Բոլոր աշխատությունները մտցնել «Քննիկոնի» մեջ և հայտարարել, որ հայտնաբերվել է Շիրակացու հիմնական աշխատությունը, սխալ է, նման բան իրականության մեջ գոյություն չունի և չի էլ ունեցել։

Կարելի է, իհարկե, խոսել Շիրակացու աշխատությունների ժողովածուի մասին, պարզել, թե նրա մեջ ինչ գործեր են ղեկավարված եղել, բայց բոլոր աշխատությունները համարել «Քննիկոն»՝ բացահայտ սխալ է։

«КРИТИКОН» АНАНИИ ШИРАКАЦИ

Проф. Г. Б. ПЕТРОСЯН

(Резюме)

В статье рассматривается история возникновения проекта армянского неподвижного календаря «Критикон», созданного Ананией Ширакаци во второй половине VII века. Сопоставление заглавия и содержания одного письма Григора Магистра показывает, что слова «большой критикон» внесены в заглавие письма позднее, при персписке рукописей. В этой связи оспариваются положения статей А. С. Матевосяна о «Критиконе» («Вестник общественных наук» АН АрмССР, 1974, № 7, 8; «Историко-филологический журнал», 1979, № 2).